

**Դատական Գործ N: ԱՐԴ/0023/02/09**

**Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:** 19-01-2009

**Հայցվոր/դիմող**

Անուն	Ամալյա
Ազգանուն	Ղուկասյան
Հասցե	ք.Երևան Կոմիտասի 8 բն.60

**Ներկայացուցիչ**

Անուն	Մ
Ազգանուն	Մանուկյան
Հասցե	ք.Երևան Գյուլիկկիսվյան 39/39

**Պատասխանող**

Անուն:	<ՋԱՀ> հրատարակչություն ՓԲԸ
Հասցե:	Արմավիրի մարզ գ. Եղեգնուտ
<b>Քաղաքացիական գործի ստացման կարգը:</b>	Առաջին անգամ
<b>Ինքնուրույն պահանջ ներկայացնող:</b>	

**3-րդ անձ**

Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Պահանջ:</b>	Հեղինակային խախտված իրավունքների վերականգնման և վնասի փոխհատուցման պահանջի մասին
<b>Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:</b>	5.3
<b>Պետական տուրք:</b>	0
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Հակընդդեմ հայցի ներկայացման ամսաթիվը:</b>	
<b>Հակընդդեմ պահանջ:</b>	
<b>Պետական տուրք:</b>	

**Ամսաթիվ:** 19-01-2009

**Նախագահող դատավոր**

Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	Մանվել Մազմանի Սիմոնյան

**Դատավոր**

Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	

<b>Որոշման ամսաթիվ:</b>	21-01-2009
<b>Ներկայացվել է միջնորդություն:</b>	Ապահովում կիրառելու
<b>Բավ/մերժ:</b>	Բավարարվել է
<b>Որոշման ամսաթիվ:</b>	16-02-2009
<b>Տրվել է կատարողական թերթ:</b>	
<b>Հայցի ապահովման միջոցները:</b>	Գույքի դրամական միջոցների վրա արգելանք դնելը
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	16-02-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	13-03-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	24-03-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	03-04-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	28-04-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	07-05-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	13-05-2009
<b>Դատաքննության ամսաթիվ:</b>	19-05-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	21-01-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ժամ:</b>	
<b>Հայցի լուծման ամսաթիվ:</b>	03-06-2009
<b>Հայցի լուծումը:</b>	Բավարարվել է
<b>Հոդված</b>	
<b>Հոդված</b>	<< քաղ. օր-ի 1113,1116,1118,1132 հոդվածներ, <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 3 հոդվածի 1 կետ, 66-րդ հոդված
<b>Հակընդդեմ հայցի լուծումը :</b>	
<b>Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատական ակտ (վճիռ, որոշում):</b>	Քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ 0023-02-09  Վ Ճ Ի Ո ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով  ք. Արմավիր 3 հունիսի 2009թ. Նախագահող դատավոր Մանվել Սիմոնյան Քարտուղարությամբ Ցողիկ Դանիելյանի Մասնակցությամբ Հայցվորի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանի /անձնագիր ԱՖ 0741669/

Պատասխանողի ներկայացուցիչներ Հրաչյա Եղիազարյանի /անձնագիր ԱԵ 0334954/ և Յուրա Եղիազարյանի /անձնագիր ԱԲ 0224160/ Պատասխանողի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձի ներկայացուցիչ Յուրա Եղիազարյանի /անձնագիր ԱԲ 0224160/

դռնբաց դատական նիստում, քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Ամայա Ղուկասյանի ընդդեմ <<Ջահ Հրատարակչություն>> փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ <<Ջահ ինդասթրիզ>> փակ բաժնետիրական ընկերության՝ հեղինակային խախտված իրավունքների վերականգնման և վնասի փոխհատուցման պահանջի վերաբերյալ.

Պ Ա Ր Զ Ե Ց  
I

#### I. Գործի դատավարական նախապատմությունը

Ամայա Ղուկասյանը /անձնագիր ԱԱ 0374408, տրված 03.05.1996թ. 004-ի կողմից/ 19.01.2009թ. հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ի՝ հեղինակային խախտված իրավունքների վերականգնման և վնասի փոխհատուցման պահանջի վերաբերյալ: 21.01.2009թ. հայցադիմումը վարույթ է ընդունվել և գործը դատաքննության է նախապատրաստվել << քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22 2 գլխի դրույթներին համապատասխան: Գործին մասնակցող անձինք 21.01.2009թ << քաղ. դատ. օր-ի 78, 93 և 95 հոդվածներով սահմանված կարգով պատշաճ կարգով ծանուցվել են նախնական դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ: 05.03.2009 թվականին պատասխանող <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ն անվանափոխվել է <<Ջահ ինդասթրիզ>> ՓԲ ընկերության և դատարանի որոշմամբ վերջինս ճանաչվել է պատասխանողի իրավահաջորդ: Դատարանի որոշմամբ սույն քաղաքացիական գործով վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ է ներգրավվել <<Քոսթ Փրես>> ՍՊԸ-ն: Պատասխանող <<<<Ջահ ինդասթրիզ>> ՓԲԸ-ի ներկայացուցիչը և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<Քոսթ Փրես>> ՍՊԸ-ն հայցադիմումին պատասխան են ներկայացրել, որով առարկել են հայցի դեմ: Թիվ ԱՐԴ/0023/02/09 քաղաքացիական գործի դատաքննությունը նշանակվել է 07.05.2009թ. և գործին մասնակցող անձինք << քաղ. դատ. օր-ի սահմանված կարգով պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի օրվա և ժամի վերաբերյալ:

#### 2. Հայցվորի իրավական դիրքորոշումը

Հայցվոր Ամայա Ղուկասյանն իր ներկայացուցիչ Մ. Մանուկյանի միջոցով դիմելով դատարան հայցադիմումով հայտնել է, որ 1949թ. ավարտել է Երևանի Վ.Ս.Մոլոտովի անվան պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, աշխատել <<<Հայպետհրատ>> հրատարակչությունում որպես մանկապատանեկան գրականության խմբագրության վարիչ, որ ռուսերենից հայերեն թարգմանել է ավելի քան հիսուն անուն գիրք, քառասունից ավելի խաղարկային ֆիլմեր, աշխատակցել է Հայաստանի Հանրապետության գրական հանդեսներին, ինչպես նաև Բաքվի <<Գրական Աղբյուր>> հանդեսին, զբաղվել է

մանկապատանեկան գրականության պրոպագանդայով, պետական հեռուստատեսությամբ վարել է <<Գրքեր Ձեզ համար>> հեղինակային հաղորդաշարը:

1960 թվականին տպագրության օրվա առթիվ արժանացել է պատվոգրի:

1972 թվականին ԽՍՀՄ ժողովուրդների պատմվածքների երկհատոր <<Եղբայրական հանդիպում>> ժողովածուն կազմելու և թարգմանելու համար արժանացել է ԽՍՀՄ Հրատպետկոմի <<Արժաթ մեդալ>> պարգևի:

1976 թվականից ՀԳՄ անդամ է:

1980 թվականին <<Սովետական գրող>> հրատարակչության կողմից հրատարակվել է Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի ռուսերենից հայերեն իր կողմից թարգմանված գիրքը:

10.12.1984 թվականին արժանացել է <<Աշխատանքի վետերան>> հուշամեդալի:

1994 թվականից Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է:

2004 թվականին Մ. Ա. Շուլիսովի 100-ամյակի առիթով արժանացել է հուշամեդալի:

<<Լույս հրատարակչություն>> ՓԲԸ-ի հետ 14.11.2005թվականին կնքել է հեղինակային բացառիկ պայմանագիր, որով որպես իրավատեր բացառիկ հիմքով այդ ընկերությանը 15 տարի ժամկետով փոխանցել է հայերեն լեզվով իր ստեղծած Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի օգտագործման նկատմամբ ունեցած բոլոր, ներառյալ՝ բացահայտման եղանակով հրատարակման, վերարտադրման /վերահրատարակման/, լույսընծայման, տարածման, արտահանման, հրապարակային ցուցադրման, թարգմանության իրավունքները:

24.03.2008 թվականին <<Արևիկ>> հրատարակչություն ՓԲԸ-ի հետ կնքել է պայմանագիր, որով որպես հեղինակ Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> ժողովածուի իր կատարած հայերեն թարգմանությունը հրատարակելու իրավունքը հանձնել է այդ ընկերությանը:

2007 թվականից գրախանութներում վաճառվում է այդ նույն գիրքն արդեն <<Ջահ հրատարակչություն>> ՓԲԸ-ի կողմից հրատարակված, որը այն տպագրել է առանց իր համաձայնության՝ չնչելով իր անունը և ոտնահարելով իր հեղինակային իրավունքները:

27.12.2007 թվականին <<Ջահ հրատարակչություն>> ՓԲԸ-ի և <<Նոյան տապան>> ՍՊԸ-ի միջև կնքվել է կոմիսիայի թիվ 56/70 պայմանագիր, որով կոմիսիոները՝ <<Նոյան տապան>> ՍՊԸ-ն, պարտավորվել է կոմիտենտի՝ <<Ջահ հրատարակչություն>> ՓԲԸ-ի, հանձնարարությամբ, վարձատրության դիմաց իր անունից, սակայն կոմիտենտի հաշվին կատարել այդ պայմանագրի մաս կազմող հավելվածում նշված գրքերի, այդ թվում նաև Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի վաճառքի գործարք: Ըստ այդ հավելվածի՝ <<Նոյան տապան>> ՍՊԸ-ն պարտավորվել է վաճառել 15 հատ, յուրաքանչյուրը՝ 1700 ՀՀ դրամ արժողությամբ Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գիրքը, որն ընդհանուր արժեքով կազմում է 25.500 /քսանհինգ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, որից 4.500 /չորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը կոմիսիոն գանձույթի չափն է:

25.12.2007 թվականին թիվ 206 ապրանքագրի համաձայն <<Քոսթ Փրես>> ՍՊԸ-ն հանձնել և <<Ջահ հրատարակչություն>> ՓԲԸ-ն ստացել է 300 /երեք հարյուր/ հատ գիրք (17-24, 77 էջ), յուրաքանչյուրն 825 /ութ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ արժողությամբ, ընդամենը՝ 247.500 /երկու հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

Իր հեղինակային իրավունքների արտադատատարանական պաշտպանության համար դիմել է <<Հայիտեղինակ>> հեղինակների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությանը, բացի այդ <<Գրական թերթ>>-ի 21.11.2008 թվականի #40(2959) համարում հողված է տպագրել <<Բացահայտ գրագողություն օրը ցերեկով վերնագրով>>:

<<Սովետական գրող>> հրատարակչության միջոցով 1980

թվականին հրատարակված, իր կողմից ռուսերենից հայերեն թարգմանված Շառլ Պերրոյի <<Վեքիաթներ>> գիրքը << քաղաքացիական օրենսգրքի 1111, 1113 հոդվածների և <<Հեղինակային իրավունքի ու հարակից իրավունքների մասին>> << օրենքի 3-րդ հոդվածի համաձայն համարվում է իր հեղինակային իրավունքի օբյեկտ, հետևաբար այդ գրքի նկատմամբ ունի հեղինակային իրավունք: Այդ գրքի առաջին էջում նշված է <<Ռուս. թարգմ. Ամայա Ղուկասյանը>> արտահայտությունը, ուստի << քաղաքացիական օրենսգրքի 1118 հոդվածի համաձայն այդ գրքի ածանցյալ ստեղծագործության հեղինակը համարվում է ինքը: Իր որպես վերոհիշյալ ածանցյալ ստեղծագործության հեղինակի, և <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ի միջև չի կքվել որևէ հեղինակային պայմանագիր, ուստի վերջինս խախտել է իր հեղինակային իրավունքը:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով << քաղաքացիական օրենսգրքի 1111, 1113, 1118, 1124, 1134 և <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> << օրենքի 66 հոդվածով հայցվոր Ամայա Ղուկասյանը դատարանից խնդրել է հետևյալը.

1). <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ից բռնագրավել վիճելի գրքի ամբողջ խմբաքանակը, գրքի պատրաստման համար օգտագործվող նյութերն ու սարքվորումները,

2). <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ին պարտավորեցնել փոխհատուցելու իր կրած վնասները և նրանից հօգուտ իրեն բռնագանձել վիճելի գրքի 300 օրինակի վաճառքից ստացված ամբողջ գումարը` 510.000 /հինգ հարյուր տաս հազար/ << դրամ /300 X 1700/ << դրամ գումարը:

Հայցվորի ներկայացուցիչ Մամիկոն Մանուկյանը առարկելով պատասխանողի կողմից դատարան ներկայացված հայցադիմումի պատասխանին` դա պատճառաբանել է հետևյալով. 1980 թվականին <<Սովետական գրող>> հրատարակչության կողմից տպագրված Շառլ Պերրոյի <<Վեքիաթներ>> գրքի առաջին էջում նշված է, որ գրքի ռուսերենից հայերեն թարգմանությունը կատարվել է Ամայա Ղուկասյանի կողմից, ով համաձայն <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> << օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 4-րդ կետերի, << քաղաքացիական օրենսգրքի 1113, 1118 հոդվածների գրքի նկատմամբ ունի հեղինակային իրավունք, որը վիճարկաման առարկա չէ: Նա ամբողջությամբ պնդեց հայցը և հայցադիմումում նշված հիմնավորումները:

### 3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը

Պատասխանող <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ի ներկայացուցիչ Յուրա Եղիազարյանն առարկեց հայցի դեմ և դատարանից խնդրեց Ամայա Ղուկասյանի հայցը մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

Մասնավորապես, սույն քաղաքացիական գործով հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ հանդիսանում է Շառլ Պերրոյի <<Վեքիաթներ>> գրքի հայերեն թարգմանության նկատմամբ բացառիկ (այդ թվում նաև գույքային) իրավունքների իրավատերը:

Միակ ապացույցը, որը որևէ կերպ առնչվում է դրան, դա 1980 թվականին հրատարակված գրքի առաջին էջի պատճենն է, որը որևէ կերպ չի ապացուցում այդ փաստը, այլ ընդհակառակը, դրանով միայն ապացուցվում է, որ այդ գրքի նկատմամբ բացառիկ հեղինակային իրավունքը պատկանում է <<Սովետական գրող>>

հրատարակչությանը, որպիսի փաստը կարող է վկայել պահպանության ենթակա իրավունքների բացակայությունը:

Համաձայն << քաղաքացիական օրենսգրքի 1132 հոդվածի 1-ին մասի` այն ստեղծագործությունները, որոնք << տարածքում երբևիցե պահպանության չեն տրամադրվել, համարվում են հանրային սեփականություն: Համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի, յուրաքանչյուր անձ իրավունք ունի ազատ օգտագործել հանրային

սեփականություն համարվող ստեղծագործությունները:  
 Հայցվորի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել իր հեղինակային իրավունքը ՀՀ տարածքում պահպանության տրամադրված լինելու մասին: Այսինքն, հայցվորի պահանջը զուրկ է որևէ հիմքից:  
 Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1118 հոդվածի 2-րդ մասի՝ ածանցյալ ստեղծագործության հեղինակը օգտվում է նման ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքից՝ վերանշակված, թարգմանված կամ հավաքած ստեղծագործության մեջ ներառված ստեղծագործության իրավունքը պահպանելու պայմանով:  
 Ինչպես երևում է հայցվորի ներկայացրած միակ ապացույցից՝ 1980թվականին հրատարակված գրքի առաջին էջից, Ամալյա Ղուկասյանը թարգմանությունը կատարել է ռուսերենից, սակայն նա չի պահպանել ռուսերեն թարգմանած հեղինակի իրավունքը, իսկ այդպիսի հեղինակի առկայությունն ակնհայտ է, քանի որ հեքիաթների հեղինակը այն հաստատ ռուսերեն լեզվով չի գրել:  
 Վերոհիշյալ հեղինակի հեղինակային իրավունքները հայցվորի կողմից պահպանված կլինեին, եթե գոնե գրքում նշվեր այդ անձի անունը, որը Ամալյա Ղուկասյանի կողմից չի կատարվել և դեռ հայցվորը իրեն իրավունք է վերապահում խոսել իր խախտված հեղինակային իրավունքների մասին:  
 Հայցվոր կողմը դատարանին չի ներկայացրել Ամալյա Ղուկասյանի և «Սովետական գրող»՝ հրատարակչության միջև կնքված պայմանագիրը, որի հիման վրա թարգմանությունը տրամադրվել է հրատարակման: Նշված պայմանագրի չներկայացումից միանշանակորեն հետևում է, որ Ամալյա Ղուկասյանը թարգմանելով հեքիաթները կատարել է իր ծառայողական պարտականությունները, ինչի համար պայմանագրի կնքումը պարտադիր չէ:  
 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1128 հոդվածով սահմանվում է, որ «Գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով աշխատողի կողմից ստեղծագործության ստեղծման դեպքում գործատուն համարվում է այդ ստեղծագործությամբ գույքային իրավունքների իրավատերը»: Տվյալ դեպքում ևս հայցվոր կողմը համաձայն վերոհիշյալ հոդվածի գույքային իրավունքների իրավատեր չի համարվում և պահանջ ներկայացնել չի կարող:  
 Նույնիսկ եթե ընդունենք, որ հեղինակային բացառիկ իրավունքները պատկանում են հայցվորին, ապա այդ դեպքում վերջինիս կողմից չի հիմնավորվել այն հանգամանքը, որ իրեն «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ի կողմից պատճառվել է վնաս, այդ իսկ պատճառով էլ հայցվորի կողմից չի ներկայացվել վնասի հաշվարկը:  
 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1137 հոդվածը հստակ և իմպերատիվ կերպով սահմանում է հեղինակային իրավունքը խախտած անձի պատասխանատվության սահմանները: Հայցվորի պահանջը այս դեպքում ևս հակասում է գործող օրենսդրության պահանջներին և հետևաբար ենթակա է մերժման: Այս պնդումը հիմնավորվում է նաև այն փաստով, որ հայցվորն իր բացառիկ իրավունքները փոխանցել է «Լույս հրատարակչություն» ՓԲԸ-ին և «Արևիկ»՝ հրատարակչություն ՓԲԸ-ին:

II

4. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

գ Ամալյա Ղուկասյանն, ավարտելով Վ.Մ. Մոլոտովի անվան բանասիրական ֆակուլտետն, աշխատել է «Հայպետհրատ»՝ հրատարակչությունում որպես մանկապատանեկան գրականության խմբագրության վարիչ, ռուսերենից հայերեն թարգմանել է ավելի քան հիսուն անուն գիրք, քառասունից ավելի խաղարկվող ֆիլմեր: գ 1972 թվականին ԽՍՀՄ ժողովուրդների պատմվածքների երկհատոր «Եղբայրական հանդիպում» ժողովածուն կազմելու և

թարգմանելու համար արժանացել է ԽՍՀՄ Հրատպետկոմի <<Արժաթ մեդալ>> պարգևի:

գ 1976 թվականից ՀԳՄ անդամ է:

գ 1980 թվականին <<Սովետական գրող>> հրատարակչության կողմից հրատարակվել է Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի ռուսերենից հայերեն թարգմանված նրա աշխատանքը (գործում ներկայացված է Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի առաջին էջի պատճենը):

գ Ամայյա Ղուկասյանի և <<Լույս հրատարակչություն>> ՓԲԸ-ի միջև 14.10.2005 թվականին կնքվել է հեղինակային բացառիկ պայմանագիր, որով Ա. Ղուկասյանը բացառիկ հիմքով փոխանցել է 15 տարի ժամկետով հայերեն լեզվով ստեղծված Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի օգտագործման նկատմամբ ունեցած բոլոր, ներառյալ՝ բացահայտման եղանակով հրատարակման, վերարտադրման /վերահրատարակման/, լույսընծայման, տարածման, արտահանման, հրապարակային ցուցադրման, թարգմանության իրավունքները:

գ 24.03.2008 թվականին <<Արևիկ>> հրատարակչություն ՓԲԸ-ի Ամայյա Ղուկասյանի միջև կնքվել է պայմանագիր, որով հեղինակը՝ Ամայյա Ղուկասյանն, իր կատարած հայերեն թարգմանությունը՝ Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> ժողովածուն հրատարակելու իրավունքը 60 էջ մեքենագիր ծավալով հանձնել է <<Արևիկ>> հրատարակչություն ՓԲԸ-ին:

գ 10.12.1984 թվականին արժանացել է <<Աշխատանքի վետերան>> հուշամեդալի:

գ 1994 թվականից Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է:

գ Գործում առկա 21.05.2009թ. Ս-1768 գրության համաձայն <<Քոսթ Փրես>> ՍՊԸ և <<Զահ Հրատարակչություն>> ՓԲԸ միջև 25.12.2007թ. կնքված թիվ 206 հաշիվ ապրանքագիրը վկայում է այն մասին, որ <<Քոսթ Փրես>> ՍՊԸ և <<Զահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ին վերջինիս կողմից տրամադրված պատրաստի նյութի հիման վրա տպագրված 300 օրինակ գիրքը:

5. Դատարանի իրավական վերլուծությունները, պատճառաբանությունները և եզրահանգումները

Դատարանը լսելով կողմերին, հետազոտելով քաղաքացիական գործի բոլոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գնահատելով դրանք, գտնում է, որ հայցը հիմնավոր է, ուստի ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն <<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության եւ արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը (այսուհետ՝ ստեղծագործություն), որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձևով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրոնային ձևը, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1113 հոդվածի 1-ին մասի՝ հեղինակային իրավունքի օբյեկտ են՝ սույն օրենսգրքի 1111 հոդվածով սահմանված պահանջները բավարարող ստեղծագործությունների մասերը, դրանց անվանումները և ածանցյալ ստեղծագործությունները:

Ածանցյալ են համարվում այն ստեղծագործությունները, որոնք ստեղծվում են մեկ այլ ստեղծագործության վերամշակման հետևանքով: Այդ ստեղծագործությունները ևս համարվում են ստեղծագործական աշխատանքով ստեղծված ինքնուրույն և

յուրօրինակ ստեղծագործություններ, սակայն դրանց  
յուրօրինակությունը երկրորդային է, քանի որ հիմնված է բնօրինակ  
ստեղծագործության վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1113 հոդվածի 2-րդ մասի  
համաձայն, ածանցյալ ստեղծագործություններ են՝  
թարգմանությունները: Որպես կանոն, ածանցյալ ստեղծագործության  
ինքնուրույնությունը դրսևորվում է բնօրինակը ստեղծագործական  
նոր ձևով ներկայացնելու մեջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1118 հոդվածի 2-րդ կետով  
սահմանվում է, որ ածանցյալ ստեղծագործության հեղինակն  
օգտվում է նման ստեղծագործության նկատմամբ հեղինակային  
իրավունքից՝ վերանշակված, թարգմանված կամ հավաքած  
ստեղծագործության մեջ ներառված ստեղծագործության հեղինակի  
իրավունքը պահպանելու պայմանով: Ածանցյալ ստեղծագործության  
նկատմամբ հեղինակային իրավունքը չպետք է վնասի  
թարգմանության, վերափոխման, վերադաշնակման կամ  
վերանշակման ենթարկված ստեղծագործության հեղինակի  
իրավունքները: Տվյալ դեպքում Ամայյա Ղուկասյանի կողմից  
<<Սովետական գրող>> հրատարակչության միջոցով 1980  
թվականին հրատարակված, ռուսերենից հայերեն թարգմանված  
Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գիրքը համարվում է հեղինակային  
իրավունքի օբյեկտ, հետևաբար այդ գրքի նկատմամբ էլ Ամայյա  
Ղուկասյանն ունի հեղինակային իրավունք:

Քննության առնելով պատասխանող Ընկերության  
առարկությունները, մասնավորապես այն, որ գործով հայցվորը որևէ  
ապացույց չի ներկայացրել այն մասին, որ ինքը հանդիսանում է Շառլ  
Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի հայերեն թարգմանության նկատմամբ  
բացառիկ (այդ թվում նաև գույքային) իրավունքների իրավատերը  
դատարանը գտնում է անհիմն, քանի որ դեռևս 1980 թվականին  
<<Սովետական գրող>> հրատարակչության կողմից հրատարակվել  
է Ամայյա Ղուկասյանի հայերեն թարգմանությամբ Շառլ Պերրոյի  
<<Հեքիաթներ>> գիրքը, որպիսի փաստը վկայում է, որ Ամայյա  
Ղուկասյանը թարգմանելու եղանակով բացահայտ և տևական  
օգտագործել է Շառլ Պերրոյի ստեղծագործությունը և այդ  
թարգմանությամբ չի խախտվել հեղինակի իրավունքները,  
ստեղծագործության ամբողջականությունը, չի աղճատվել նրա  
իմաստը՝ հակառակ դեպքում հեղինակը կամ նրա  
իրավահաջորդները ունեցել են իրական հնարավորություն  
պաշտպանելու Շառլ Պերրոյի հեղինակային իրավունքները  
ներպետական և միջազգային օրենսդրությամբ սահմանված  
կարգով: Ավելին, ՀՀ-ում գործում է հեղինակության  
կանխավարկածը. այսինքն՝ այլ ապացույցների բացակայության  
դեպքում ստեղծագործության հեղինակ է համարվում այն  
քաղաքացին, որի անունը մատնանշված է ստեղծագործության  
բնօրինակում կամ պատճենի վրա: Ընդ որում, այս հիմքով հեղինակ  
են ճանաչվում ոչ միայն բնօրինակներ, այլև ածանցյալ  
ստեղծագործություններ ստեղծողները:

Անդրադառնալով պատասխանողի այն փաստարկին, որ հայցվորի  
կողմից չի հիմնավորվել այն հանգամանքը, որ իրեն <<Ջահ  
Հրատարակչություն>> ՓԲԸ-ի կողմից պատճառվել է վնաս և չի  
ներկայացվել վնասի հաշվարկ, դատարանը գտնում է, որ այն սույն  
քաղաքացիական գործի լուծման համար էական նշանակություն  
չունի, քանի որ տվյալ դեպքում իրավական խնդիր է համարվում այն  
հարցը, թե արդյոք խախտվել են Ամայյա Ղուկասյանի՝ որպես  
ածանցյալ ստեղծագործության հեղինակի հեղինակային  
իրավունքները:

Պատասխանողի առարկությունները՝ կապված հայցվորի կողմից իր  
հեղինակային իրավունքը ՀՀ տարածքում պահպանության  
տրամադրած լինելու մասին որևէ ապացույց չներկայացնելու և այն  
որ Ամայյա Ղուկասյանը, թարգմանելով հեքիաթները, կատարել է իր  
ծառայողական պարտականությունները, դատաքննությամբ չեն  
հիմնավորվել և դրանք հայցապահանջի մերժման համար տվյալ



դեպքում վերաբերելի և թույլատրելի ապացույցներ չեն հանդիսանում, քանի որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1116 հոդվածի, ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է այն ստեղծելու փաստի ուժով և հեղինակային իրավունքի ծագման համար չի պահանջվում ստեղծագործության գրանցում կամ որևէ այլ ձևականություն, և որ անգամ այն դեպքերում, երբ ստեղծագործության նկատմամբ առաջանում է հանրային սեփականություն, այդ ստեղծագործությունն օգտագործելիս պետք է պահպանվեն հեղինակության իրավունքը, անվան իրավունքը և ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ քաղ. օր. 1132 հոդված):

Հեղինակային պայմանագիրը կազավորող նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հեղինակային պայմանագիրը դա համաձայնություն է, որով հեղինակը կամ հեղինակային իրավունքի իրավատերը պարտավորվում է պայմանագրի մյուս կողմին փոխանցել ստեղծագործությունն օգտագործելու բացառիկ իրավունքները կամ դրանց մի մասը, իսկ օգտագործողը պարտավորվում է այն օգտագործել պայմանագրով նախատեսված ծավալով, եղանակով ու վճարել պայմանավորված վարձատրությունը: Տվյալ դեպքում դատարանը հաստատված է համարում այն հանգամանքը, որ 14.10.2005 թվականին «<Լույս հրատարակչություն>> ՓԲԸ-ի հետ և 24.03.2008 թվականին «<Արևիկ>> հրատարակչության հետ հայցվորը կնքել է հեղինակային բացառիկ պայմանագիր, որով բացառիկ հիմքով փոխանցել է Շառլ Պերրոյի «<Հեքիաթներ>> գրքի հայերեն լեզվով իր ստեղծած գրքի օգտագործման նկատմամբ ունեցած բոլոր, ներառյալ՝ բացահայտման եղանակով հրատարակման, վերարտադրման /վերահրատարակման/, լույսընծայման, տարածման, արտահանման, հրապարակային ցուցադրման, թարգմանության իրավունքները, մինչդեռ «<Ջահ հրատարակչություն>> ՓԲԸ-ի կողմից Շառլ Պերրոյի «<Հեքիաթներ>> գիրքը հրատարակվել է առանց Ամալյա Ղուկասյանի՝ որպես ածանցյալ ստեղծագործության հեղինակի, հետ կնքված հեղինակային /հրատարակչական/ պայմանագրի, չնշելով նրա անունը և ոտնահարելով նրա հեղինակային իրավունքները:

Մինչդեռ, ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ Բեռնի կոնվենցիայի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, թարգմանությունները պաշտպանվում են որպես բնօրինակային ստեղծագործություններ՝ առանց վնասելու բնօրինակային ստեղծագործության հեղինակի իրավունքներին:

«<Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին>> ՀՀ օրենքի 66-րդ հոդվածով նախատեսված է ստեղծագործության հեղինակի կամ հեղինակային իրավունքների այլ իրավատիրոջ իրավունքն՝ իրենց խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպանության նպատակով վնասի հատուցում, մինչև իրավախախտումը գոյություն ունեցող դրության վերականգնում և իրավունքը խախտող կամ կամ խախտման վտանգ պարունակող գործողությունների դադարեցում պահանջելու իրավունքը: Տվյալ դեպքում հայցվորի ներկայացուցիչը դատարանից խնդրել է «<Ջահ Հրատարակչություն>> ՓԲԸ-ին պարտավորեցնել փոխհատուցելու Ամալյա Ղուկասյանի կրած վնասները. այն է՝ վիճելի գրքի 300 օրինակի վաճառքից ստացված ամբողջ գումարը՝ 510.000 /հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

ՀՀ քաղ. դատ. օր-ի 48 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132 հոդվածներով, դատարանը

**Վ Ճ Ռ Ե Ց**

Պատասխանող <<Ջահ Հրատարակչություն>> ՓԲ ընկերության իրավահաջորդ <<Ջահ ինդասթրիզ>> փակ բաժնետիրական ընկերությունից հոգուտ հայցվոր Ամայա Ղուկասյանի բռնագանձել 510.000 /հինգ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ, որպես նրա կողմից 2007 թվականին հայերեն լեզվով հրատարակված Շառլ Պերրոյի <<Հեքիաթներ>> գրքի 300 օրինակի վաճառքից այդքան գումարի ստացմամբ պատճառած գույքային վնասի փոխհատուցում, ինչպես նաև նրանից բռնագրավել վերոհիշյալ գրքի ամբողջ խմբաքանակը, դրա պատրաստման համար օգտագործվող նյութերն ու սարքավորումները:

Պատասխանող <<Ջահ ինդասթրիզ>> փակ բաժնետիրական ընկերությունից հոգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել 14.200 /տասնչորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ գումար որպես պետական տուրք:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման օրվանից հետո մեկամսյա ժամկետում: Վճիռը կանովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

**Դ Ա Տ Ա Վ Ո Ր Մ. Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն**

<b>Դատական ակտի ամսաթիվը:</b>	
<b>Գործը, որոշումը հանձնվել է գրասենյակ:</b>	07-07-2009
<b>Էջերի քանակը:</b>	163
<b>Գործին կից նյութեր:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	07-07-2009
<b>Էջերի քանակը:</b>	163
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գործն ուղարկվել է:</b>	07-07-2009
<b>Ուր:</b>	ՀՀ Վերքննիչ քաղ. դատարան
<b>Գրության համարը:</b>	Ե-6012
<b>Գործը ստացվել է:</b>	
<b>Ներկայացվել է դիմում միջնորդություն:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	14-07-2009
<b>Ամսաթիվ:</b>	24-11-2009
<b>Ամսաթիվ:</b>	24-11-2009
<b>Նախագահող դատավոր</b>	

Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	Մանվել Մազմանի Սիմոնյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Արմավիրի մարզ
Դատավորի անուն:	
<b>Ամսաթիվ:</b>	25-11-2009
<b>Էջերի քանակ:</b>	163 և 88
<b>Գործին կից նյութերը:</b>	
<b>Գործն ուղարկվել է:</b>	
<b>Ուր:</b>	
<b>Գրության համարը:</b>	
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատական Գործ N: ԱՐԴ/0023/02/09</b>	
<b>Ամսաթիվ:</b>	03-06-2009
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն:	Ջահ ինդուսթրիզ ՓԲԸ
Հասցե:	
<b>Ներկայացուցիչ</b>	
Անուն	Յու
Ազգանուն	Եղիազարյան
Հասցե	
<b>Ուն կողմից է բերվել բողոքը:</b>	Պատասխանող
<b>Պետական տուրք:</b>	
<b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
<b>Բողոքարկվող դատական ակտը:</b>	03.06 Բավարարվել է
<b>Գործի համարը:</b>	ԱՐԴ/0023/02/09
<b>Ամսաթիվ:</b>	13-07-2009
<b>Վիճակագրական տողի համարը:</b>	5.3
<b>Գործի համարը:</b>	ԱՐԴ/0023/02/09
<b>Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):</b>	163

<b>Ամսաթիվ:</b>	14-07-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Արսեն Սամվելի Մկրտչյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Նոյեմ Հովսեփյան
<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Քաղաքացիական վերաք.
Դատավորի անուն:	Նարինե Տարիելի Բարսեղյան
<b>Երբ:</b> 27-07-2009	
<b>Որոշումը ուղարկվել է կողմերին:</b>	29-07-2009
<b>Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:</b>	29-07-2009
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	21-08-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	29-07-2009
<b>Ժամ:</b>	11:15
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	322
<b>Ամսաթիվ:</b>	04-09-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	24-08-2009
<b>Ժամ:</b>	12:15
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	322
<b>Ամսաթիվ:</b>	11-09-2009
<b>Ծանուցագիրը ուղարկվել է:</b>	07-09-2009
<b>Ժամ:</b>	12:15
<b>Նիստերի դահլիճի համարը:</b>	322
<b>Ամսաթիվ:</b>	11-09-2009
<b>Անփոփոխ թողնված դատական ակտ:</b>	Պատճառաբանվել է
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Դատական ակտ:</b>	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՔԱՑՈՒՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴՍԱՐԱՆ  ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր Քաղաքացիական գործ թիվ իրավասության դատարանի ԱՐԴ-0023/02/09 03.06.2009 թվականի վճիռ Նախագահող դատավոր՝ Ս.Սիմոնյան

ՈՐՈՇՈՒՄ  
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) նախագահությամբ Ա.ՄԿՐՏՉՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ն.ՀՈՎՍԵԹՅԱՆԻ և ԲԱՐՍԵՂՅԱՆԻ

2009 թվականի սեպտեմբերի 11-ին, դռնբաց դատական նիստում քննելով «Ջահ Հրատարակչություն» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ «Ջահ ինդասթրիզ» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) վերաքննիչ բողոքը ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2009 թվականի վճռի դեմ, որը կայացվել է թիվ ԱՐԴ-0023/02/09 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Ամալյա Ղուկասյանի ընդդեմ «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Ջահ ինդասթրիզ» ՓԲԸ-ի՝ հեղինակային խախտված իրավունքների վերականգնման և վնասի փոխհատուցման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը. Դիմելով դատարան՝ հայցվորը պահանջել է վերականգնել իր խախտված հեղինակային իրավունքները և փոխհատուցել իր կրած վնասները:

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2009 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Սույն գործով վերաքննիչ բողոք է ներկայացրել «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Ջահ ինդասթրիզ» ՓԲԸ-ն (ներկայացուցիչ՝ Յ.Շղիազարյան):

Վերաքննիչ բողոքին պատասխան է ներկայացրել հայցվոր Ամալյա Ղակասյանը (ներկայացուցիչ Մ.Սանուկյան):

2. Դատարանի կողմից հաստատված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը. Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) 1980 թվականին հրատարակվել է Շարլ Պերրոյի «Հեքիաթներ» գրքի հայերեն տարբերակը, ռուսերենից թարգմանությունը՝ Ամալյա Ղուկասյանի:

2) 21.05.2009 թվականի Մ-1768 գրության համաձայն «Քոստ Փրես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Ջահ հրատարակչություն» ՓԲԸ-ի միջև 25.12.2007 թվականին կնքվել է թիվ 206 հաշիվ ապրանքագիրը, ըստ որի: «Քոստ Փրես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «Ջահ հրատարակչություն» ՓԲԸ-ին է հանձնել վերջինիս կողմից պատվիրված և «Քոստ Փրես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից արտադրված Շարլ Պերրոյի «Հեքիաթներ» գրքի 300 օրինակ:

3) Ամալյա Ղուկասյանի և «Լույս հրատարակչություն» փակ բաժնետիրական ընկերության միջև 14.10.2005 թվականին կնքվել է հեղինակային բացառիկ պայմանագիր, որով Ա. Ղուկասյանը բացառիկ հիմքով փոխանցել է 15 տարի ժամկետով հայերեն լեզվով ստեղծված Շ. Պերրոյի «Հեքիաթներ» գրքի օգտագործման նկատմամբ ունեցած բոլոր, ներառյալ՝ բացահայտման եղանակով հրատարակման, վերարտադրման (վերահրատարակման),

լույսընծայման, տարածման, արտահանման, հրատարակային ցուցադրման, թարգմանության իրավունքերը: Պայմանագրով նախատեսված է հոնորարի վճարում:

4) 24.03.2008 թվականին «Արևիկ» հրատարակչություն փակ բաժնետիրական ընկերության և Ամայա Ղուկասյանի միջև կնքվել է պայմանագիր, որով հեղինակը՝ Ամայա Ղուկասյան, իր կատարած հայերեն թարգմանությունը՝ Շ.Պերրոյի «Հեքիաթներ» ժողովածուն հրատարակելու իրավունքը 60 էջ մեքենագիր ծավալով հանձնել է «Արևիկ» հրատարակչություն փակ բաժնետիրական ընկերությանը: Պայմանագրով նախատեսված է հոնորարի վճարում:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը. Վերաքննիչ դատարանը ստորև շարադրում է վերաքննիչ բողոքի հիմքերն ու հիմնավորումները՝ դատարանի նախընտրած հերթականությամբ և խմբավորմամբ:

Դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ, 53-րդ, 130-րդ հոդվածի 3-րդ կետի, 131-րդ հոդվածների պահանջերը, սխալ է մեկնաբանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1118-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, չի կիրառել նույն օրենսգրքի 1128-րդ հոդվածի 2-րդ մասի, 1132-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որոնք պետք է կիրառել:

Բողոք բերած անձը բողոքի սույն հիմքը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը, խախտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 53-րդ և 48-րդ հոդվածների պահանջները, պատշաճ գնահատման չի արժանացրել գործում առկա ապացույցները, չի կատարել ապացուցման բեռի բաշխում, որով խախտել է նաև մրցակցության և կողմերի իրավահավասարության դատավարական սկզբունքը:

Այս խախտման արդյունքում դատարանը չի կիրառել ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի վերոհիշյալ հոդվածները:

Հայցվորը չի ներկայացրել ապացույց այն մասին, որ պատասխանողն իր հրատարակած գրքում օգտագործել է հենց Ամայա Ղուկասյանի կատարած թարգմանությունը, ինչը պետք է ապացուցվեր նրա կողմից: Սույն քաղաքացիական գործով՝ հայցվորը որևէ ապացույց չի ներկայացրել նաև այն մասին, որ ինքը հանդիսանում է Շարլ Պերրոյի «Հեքիաթներ» գրքի հայերեն թարգմանության նկատմամբ բացառիկ (այդ թվում նաև գույքային) իրավունքների իրավատերը: Միակ ապացույցը, որ որևէ կերպ առնչվում է դրան, դա 1980 թվականին հրատարակված գրքի առաջին էջի պատճենն է, որը որևէ կերպ չի ապացուցում այդ փաստը, այլ ընդհակառակը, դրանով միայն ապացուցվում է, որ այդ գրքի նկատմամբ հեղինակային իրավունքի նշաններ չկան, ինչը վկայում է պահպանության ենթակա իրավունքների բացակայության մասին:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1118-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա ինչպես երևում է հայցվորի ներկայացրած միակ ապացույցից՝ 1980 թվականին հրատարակված գրքի առաջին էջից, Ամայա Ղուկասյանը թարգմանությունը կատարել է ռուսերենից, սակայն նա չի պահպանել ռուսերեն թարգմանած հեղինակի իրավունքը, իսկ այդպիսի հեղինակի առկայությունն ակնհայտ է, քանի որ հեքիաթների հեղինակն այն հաստատ ռուսերեն լեզվով չի գրել:

Վերոհիշյալ հեղինակի հեղինակային իրավունքները հայցվորի կողմից պահպանված կլինեին եթե, գոնե գրքում նշվեր այդ անձի անունը, որը Ամայա Ղուկասյանի կողմից չի կատարվել և դեռ հայցվորն իրեն իրավունք է վերապահում խոսել իր խախտված հեղինակային իրավունքների մասին:

Նման պայմաններում դատարանը պարտավոր էր կիրառել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1118-րդ հոդվածի 2-րդ մասը և հանգեցնել եզրահանգման, որ հայցվորն իրավունք չունի օգտվելու ածանցյալ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1132-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ բողոք բերած անձը հայտնել է, որ հայցվորի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել իր հեղինակային իրավունքը ՀՀ տարածքում պահպանության տրամադրված լինելու մասին:

Այսինքն՝ հայցվորի պահանջը զուրկ է որևէ հիմքից:

Հայցվոր կողմը դատարանին չի ներկայացրել Ամայյա Ղուկասյանի և «Սովետական գրող» հրատարակչության միջև կնքված պայմանագիրը, որի հիման վրա թարգմանաթյունը տրամադրվել է հրատարակման:

Նշված պայմանագրի չներկայացումից միանշանակորեն հետևում է, որ Ամայյա Ղուկասյանը, թարգմանելով հեքիաթները, կատարել է իր ծառայողական պարտականությունները, ինչի համար պայմանագրի կնքումը պարտադիր չէ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1128-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ևս հայցվոր կողմը գույքային իրավունքների իրավատեր չի համարվում և իրենց դեմ պահանջ ներկայացնել չի կարող:

Հայցվորի կողմից չի հիմնավորվել և չի էլ կարող հիմնավորվել այն հանգամանքը, որ իրեն «Ջահ ինդասթրիգ» ՓԲԸ-ի կողմից պատճառվել է վնաս: Վերոհիշյալ պատճառով հայցվորի կողմից չի ներկայացվել վնասի հաշվարկը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1137- րդ հոդվածը հստակ և իմպերատիվ կերպով սահմանում է հեղինակային իրավունքը խախտած անձի պատասխանատվության սահմանները: Հայցվորի պահանջն այս դեպքում ևս հակասում է գործող օրենսդրության պահանջներին և հետևաբար ենթակա է մերժման:

Իրենց կողմից առաջ քաշված վերոհիշյալ փաստարկի վերաբերյալ դատարանի մեկնաբանությունը հասնում է զավեշտի, այդ իսկ պատճառով մեջբերում է բողոքարկվող վճռի 7-րդ էջի վերջին պարբերությունն առանց մեկնաբանությունների. «Անդրադառնալով պատասխանողի այն փաստարկին, որ հայցվորի կողմից չի հիմնավորվել այն հանգամանքը, որ իրեն «Ջահ հրատարակչություն» ՓԲԸ-ի կողմից պատճառվել է վնաս և չի ներկայացվել վնասի հաշվարկ, դատարանը գտնում է, որ այն սույն քաղաքացիական գործի լուծման համար էական նշանակության չունի, քանի որ տվյալ դեպքում իրավական խնդիր է համարվում այն հարցը, թե արդյոք խախտվել են Ամայյա Ղուկասյանի՝ որպես ածանցյալ ստեղծագործության հեղինակի հեղինակային իրավունքները»: Այս պարբերությունը վճռում ներառելով, դատարանը չի գլացել պատասխանողից գումար ռոնագանձել որպես վնասի հատուցում:

Դատարանը, խախտելով նաև դատավարական բոլոր սկզբունքները, հայցվորի պահանջով գործով որպես երրորդ անձ է ներգրավել «Քոսթ Փրես» ահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որևէ կերպ չհիմնավորելով, թե գործով կայացվող դատական ակտն ինչպես կարող է անդրադառնալ կողմերից մեկի հանդեպ նրա ունեցած իրավունքներին և պարտականություններին, և դեռ ավելին՝ արգելանք է դրել «Քոսթ Փրես» ահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող նյութերի և սարքավորումների վրա: Վճիռն այդպես էլ չի լուծել այդ հարցը, և անհասկանալի է, թե ինչու է ներգրավել այս ընկերությանը՝ որպես երրորդ անձ, ինչու է արգելանք դրվել նրա գույքի վրա և թե ինչու վճռում վերջինս անտեսվել է:

Դատարանն իր վճռով պատասխանողի վրա կիրառել է նմանակում կատարելու համար նախատեսված պատասխանատվության միջոց (հրատարակության համար օգտագործված նյութերի և սարքավորումների բռնագրավում), այնինչ նույնիսկ հայցվորն է ընդունել, որ նմանակման փաստը բացակայում է: Ժողովածուի երկու հրատարակություններն ընդհանրապես իրար նման չեն, տարբերվում են առնվազն չափերով, կազմով, նկարներով և ձևավորմամբ:

Վերոգրյալի հիման վրա, վերաքննիչ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Դատարանի 03.06.2009 թվականի վճիռը և այն փոփոխել՝

հայցը մերժել:

3. 1.Վերաքննիչ բողոքի պատասխանի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վերաքննիչ բողոքն ակնհայտ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Բողոք բերողը բողոքի 2-րդ կետում նշում է, որ Ղատարանը հաստատված է համարել այնպիսի փաստեր, որոնք գործի քննության և լուծման համար ոչ էական և ոչ էլ ոչ էական նշանակություն չունեն: Այնինչ, Ղատարանի կողմից հրապարակված վճռի 4-րդ կետում նշված հանգամանքներով ապացուցվում է, որ Ամայա Ղուկասյանն ունի հարուստ թարգմանչական փորձ, իր կատարած գործունեության համար արժանացել է բազմաթիվ պարգևատրումների ու շքանշանների:

Բողոք բերողը բողոքի 3-րդ կետում, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածը, գտնում է, որ Ա.Ղուկասյանը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ պատասխանողն իր հրատարակած գրքում օգտագործել է հենց Ա.Ղուկասյանի թարգմանությունը, ինչպես նաև չի ներկայացրել ապացույց այն մասին, որ վերջինս է հանդիսանում Շ.Պերրոյի «Հեքիաթներ» գրքի հայերեն թարգմանության նկատմամբ բացառիկ իրավունքների իրավատերը: Նման առարկությունն ակնհայտ անհիմն ու առարկայազուրկ է, քանի որ դեռևս 1980-ական թվականներին «Սովետական գրող» հրատարակչության կողմից հրատարակվել է Ա.Ղուկասյանի թարգմանությամբ Շ.Պերրոյի «Հեքիաթներ» գիրքը, որպիսի փաստը վկայում է, որ Ա.Ղուկասյանը թարգմանելու եղանակով բացահայտ և տևական օգտագործել Շ.Պերրոյի ստեղծագործությունը և այդ թարգմանությամբ չի խախտել հեղինակի իրավունքները, ստեղծագործության ամբողջականությունը, չի աղճատվել նրա իմաստը:

Պատասխանողի այս պատճառաբանությանն ի հակադրում, նախապատրաստական նիստում դատարանն ուսումնասիրեց «Սովետական գրող» հրատարակչության կողմից 1980 թվականին հրատարակված և պատասխանող «Զահ հրատարակչություն» ՓԲԸ-ի 2007 թվականի Շ.Պերրոյի «Հեքիաթներ» գրքերը: Որպես ապացույց դատարանին ներկայացրած երկու գրքերի ուսումնասիրության և համեմատության արդյունքում ակնհայտ էր, որ պատասխանողի հրատարակած գիրքը 1980 թվականի հրատարակչության արտատպումն է անգամ համապատասխանում հեքիաթների՝ ըստ ցանկի հերթականությանը:

Երկու գրքերի միջև տարբերությունը միայն արտաքին գեղարվեստական ձևավորումն է, որը կայանում է՝

ա) 1980 թվականի հրատարակված գրքում նկարները գունավոր են, իսկ 2007 թվականի՝ պատասխանողի տպագրած գրքում՝ սև ու սպիտակ,

բ) տարբերվում են գրքերի արտաքին չափերը 1980 թվականինը՝ չափերով մեծ է, իսկ 2007 թվականինը՝ փոքր:

Բողոք բերած անձը նշել է, որ 1980 թվականին հրատարակված գրքի 1-ին էջի պատճենը չի ապացուցում, որ Ա.Ղուկասյանն է կատարել թարգմանությունը: Այնինչ, անգեն աչքով ուսումնասիրելով վիճելի գրքի 1-ին էջը, ընթեռնելի եղանակով պարզ տպագրված է՝ Ռուս.թարգմ. Ամայա Ղուկասյան: Սա արդեն իսկ փաստում և ապացուցում է, որ 1980-ական թվականներին «Սովետական գրող» հրատարակչության կողմից հրատարակված Շ.Պերրոյի «Հեքիաթներ» գրքի թարգմանություն կատարել է ինքը: Ավելին, կայացված վճիռը մեկ անգամ ևս փաստում է, որ ՀՀ-ում գործում է հեղինակության կանխավարկածը, այսինքն, այլ ապացույցների բացակայության դեպքում ստեղծագործության հեղինակ է համարվում այն քաղաքացին, որի անունը մատնանշված է ստեղծագործության բնօրինակում կամ պատճենի վրա: Ընդ որում, այս հիմքով հեղինակ են ճանաչվում ոչ միայն բնօրինակները, այլև ածանցյալ ստեղծագործություններ ստեղծողները:



Ինչ վերաբերում է բողոք բերող անձի այն պատճառաբանությունը, թե ինքը ապացույց չի ներկայացրել իր հեղինակային իրավունքը ՀՀ տարածքում պահպանության տրամադրված լինելու մասին, հետևաբար դա հանրային սեփականության է, ապա դատարանն իրավացիորեն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1116-րդ հոդվածը, որ ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է այն ստեղծելու փաստի ուժով և հեղինակային իրավունքի ծագման համար չի պահանջվում ստեղծագործության գրանցում կամ որևէ այլ ձևականություն: Նույնիսկ այն դեպքում, երբ ստեղծագործության նկատմամբ առաջանում է հանրային սեփականություն, այդ ստեղծագործությունն օգտագործելիս պետք է պահպանվեն հեղինակության իրավունքը, անվան իրավունքը և ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1132-րդ հոդված):

Բողոք բերած անձի կողմից նշվել է նաև, որ հայցվորը թարգմանելով հեքիաթը ընդամենը կատարել է իր ծառայողական պարտականությունները: Մինչդեռ, գործի դատաքննության ընթացքում պատասխանողը չի հիմնավորել իր առարկությունը և դրանք հույսապահանջի մերժման համար տվյալ դեպքում վերաբերելի և թույլատրելի ապացույցներ չեն հանդիսանում: Բացի այդ, ինքը բազմիցս նշել և հիմնավորել է, որ երբեք «Սովետական գրող» հրատարակչությունում չի աշխատել, այլ որպես ստեղծագործող հեղինակ, թարգմանիչ մշտապես համագործակցել է ՀԽՍՀ-ում գործող, միակ հրատարակչության հետ: Իսկ պատասխանողը որևէ ապացույց չներկայացրեց, որ ինքը հանդիսացել է «Սովետական գրող» հրատարակչության աշխատակից: Ավելին, պատասխանողը Շ.Պերրոյի «Հեքիաթներ» գիրքը հրատարակել է առանց իր՝ որպես ածանցյալ ստեղծագործության հեղինակի հետ կնքված հեղինակային (հրատարակչական) պայմանագրի՝ չնշելով նրա անունը՝ ոտնահարելով և խախտելով վերջինիս հեղինակային իրավունքները: Առարկելով հայցի դեմ, պատասխանողը միջնորդել է քաղաքացիական գործի քննությանը, պատասխանալի կողմում ընդգրկել նաև «Ջահ հրատարակչություն» ՓԲԸ-ի հիմնադիր, միակ մասնակից և տնօրեն Հրայր Եղիազարյանին, որպես քաղաքացի, միաժամանակ պարտավորվել է կրել անձնական պատասխանատվություն դատարանի կողմից հայցի հնարավոր բավարարման դեպքում: Սակայն հետագայում, հաջորդ նախապատրաստական դատական նիստի ժամանակ հրաժարվել է իր միջնորդությունից: Այս վարքագծով պատասխանողը հիմնավորել է, որ ընդունում է իր կողմից թույլ տրված Ա.Ղուկասյանի իրավունքների խախտումը, սակայն չի ցանկանում դա հրապարակավ ընդունել:

Հայցվորի կողմից վնասի հաշվարկ չներկայացնելու վերաբերյալ հայտնել է, որ դատարանն իրավացիորեն գտել է, որ կողմերի միջև ծագած դատական վեճի իրավական խնդիր է համարվում, թե արդյոք խախտվել են իր՝ որպես ածանցյալ ստեղծագործության հեղինակի հեղինակային իրավունքները: Բացի այդ, ինքը հայցադիմումով պահանջել է «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ից բռնագանձել 510 000 ՀՀ դրամ, որը գոյացել է համաձայն 27.12.2007 թվականին «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ի և «Նոյան տապան» ահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված կոմիսիայի թիվ 56/70 պայմանագրով նշված այն հանգամանքի, որ Շ.Պերրոյի «Հեքիաթներ» գրքի յուրաքանչյուր օրինակը վաճառվել է 1 700 ՀՀ դրամ արժողությամբ, իսկ 25.12.2007 թվականին թիվ 206 ապրանքագրի համաձայն՝ «Քոսթ Փրես» ահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնել իսկ «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ն ստացել է 300 հատ գիրք (17\*24, 77 էջ): Ստացվում է, որ շուկա է հանվել վաճառքի 300 հատ գիրք 1 700 ՀՀ դրամ արժողությամբ, որը կազմում է 510 000 ՀՀ դրամ: Վերոգրյալի հիման վրա խնդրել է վերաքննիչ բողոքը մերժել:

4. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը©

Քննելով վերաքննիչ բողոքը՝ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել, որ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը քննում է բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, իրավասու է անդրադառնալ միայն այն հարցերին, որոնք վերաբերում են գործին մասնակցող անձանց, սույն վեճի առարկային, բխում են հայցի հիմքերից:

(I) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1113-րդ հոդվածի 1-ին կետը, ի թիվս այլ օբյեկտների, հեղինակային իրավունքի օբյեկտ է համարում նաև ածանցյալ ստեղծագործությունը: Նույն հոդվածի 2-րդ կետով ածանցյալ ստեղծագործություն է համարվում թարգմանությունը: Վերոնշյալ հոդվածի բովանդակության վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը թարգմանությունը հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսանալու համար որևէ պայման չի նախատեսում: Այսինքն: որևէ նշնակություն չունի, թե թարգմանությունը կատարվել է բնօրինակից կամ մյուս օրինակներից, թե վերջիններիս թարգմանությունից, քանի որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն: թարգմանությունները և այլ ածանցյալ ստեղծագործություններն ինքնուրույն

ստեղծագործություններ են և պահպանվում են որպես բնօրինակներ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1118-րդ հոդվածի 2-րդ կետը ածանցյալ ստեղծագործության հեղինակի: հեղինակային իրավունքից օգտվելու պայման է համարում թարգմանված ստեղծագործության հեղինակի իրավունքների պահպանումը: Այս հոդվածի իմաստով, թարգմանված ստեղծագործություն է համարվում ինչպես ստեղծագործության բնօրինակից կամ այլ օրինակից կատարված թարգմանությունը այնպես էլ բնօրինակի կամ այլ օրինակի թարգմանությունից կատարված թարգմանությունը:

Վերոնշյալ պատճառաբանությամբ: Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Շառլ Պերրոյի «Հեքիաթներ» գրքի: (հետայսու նաև: Գիրք) ռուսերենից կատարված թարգմանությունը (հետայսու նաև: Թարգմանություն): որպես ածանցյալ ստեղծագործությունն հանդիսանում է հեղինակային իրավունքի օբյեկտ: Սույն գործով հաստատված է և անվիճելի այն փաստը, որ Թարգմանությունը կատարել է Ամայա Ղուկասյանը:

Վկայակոչված փաստի հիմքով: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Թարգմանության նկատմամբ Ամայա Ղուկասյանը ձեռք է բերել հեղինակային իրավունք, քանի որ Վերաքննիչ դատարանին հայտնի չէ որևէ այլ ապացույց, որով կարող է հաստատվել, որ Ամայա Ղուկասյանը խախտել է Գրքի կամ վերջինիս ռուսերեն թարգմանության հեղինակների իրավունքները: Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն: ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է ստեղծագործության ստեղծման փաստի ուժով: Ստեղծագործությունը համարվում է ստեղծված, եթե այն արտահայտված է ընկալելու հնարավորություն թույլատրող որևէ օբյեկտիվ ձևով և կախված չէ այդ իրավունքի պաշտոնական հաստատագրումից, ստեղծագործության գրանցումից և որևէ այլ գործողության կատարումից:

Սույն գործով անվիճելի է այն փաստը, որ Թարգմանությունը ստեղծված է և այդ փաստի ուժով Ամայա Ղուկասյանը հանդիսանում է Թարգմանության հեղինակ:

(II) «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների» մասին ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ստեղծագործության նկատմամբ իրավատեր կարող է հանդիսանալ ինչպես հեղինակը, այնպես էլ այն անձը, որին փոխանցվել են ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները:

Սույն գործում առկա են Ամայա Ղուկասյանի և «Լույս հարատարակչության» ՓԲԸ-ի միջև 14.11.2005 թվականին կնքված հեղինակային բացառիկ պայմանագիրը և Ամայա Ղուկասյանի և «Արևիկ» ՓԲԸ-ի միջև 24.03.2008 թվականին կնքված Թարգմանության հրատարակման պայմանագիրը, որոնց ուսումնասիրությունից հետևում է, որ Ամայա Ղուկասյանը, լինելով Թարգմանության հեղինակ, հանդես է եկել որպես իրավատեր: «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն: հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձևով և եղանակով, ինչպես նաև երրորդ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը: Սույն գործում բացակայում է որևէ ապացույց, որով կհիմնավորվեր այն փաստը, որ Ամայա Ղուկասյանը հեղինակային բացառիկ գույքային իրավունքները օտարել է այլ անձի: Հետևաբար Ամայա Ղուկասյանը հանդիսանում է Թարգմանության նկատմամբ հեղինակի բացառիկ գույքային իրավունքների իրավատեր:

Վերը նշված դիրքորոշման հիման վրա Վերաքննիչ դատարանն անհիմն է համարում վերաքննիչ բողոքի այն փաստարկը, որ Ամայա Ղուկասյանը Թարգմանության նկատմամբ չունի բացառիկ իրավունքներ:

(III) Անդրադառնալով վերաքննիչ բողոքի փաստարկին Վերաքննիչ դատարանը հանգեց հետևյալին.

ՀՀ քաղաքացիական 1128-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով աշխատողի կողմից ստեղծագործության ստեղծման դեպքում գործատուն համարվում է այդ ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների իրավատեր, եթե հեղինակի և գործատուի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Նշվածից հետևում է, որ աշխատողի և գործատուի միջև կնքված պայմանագրի, հանձնարարության կամ ծառայողական պարտականությունների կատարման վերաբերյալ թույլատրելի որևէ ապացույցի ուժով ստեղծված ստեղծագործության գույքային իրավունքների նկատմամբ միայն գործատուն կարող է համարվել իրավատեր: Հետևաբար պայմանագրի, հանձնարարության կամ ծառայողական պարտականությունների կատարման վերաբերյալ թույլատրելի որևէ ապացույցի բացակայության ուժով չի կարող հաստատվել Թարգմանությունը որպես ծառայողական պարտականություն ստեղծելու փաստը: Ավելին, նման ապացույցների բացակայությունն ինքնին բավարար հիմք է հանգելու հետևության, որ Թարգմանությունը Ամայա Ղուկասյանը չի ստեղծել ծառայողական պարտականությունների կատարմամբ: Հետևաբար բողոքը սույն հիմքով հիմնավորված չէ:

(IV) Ինչ վերաբերում է վնասի հաշվարկի վերաբերյալ բողոք ներկայացրած անձի փաստարկին, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով Ամայա Ղուկասյանը, որպես Թարգմանության հեղինակ և իրավատեր, իրավունք ունի ներկայացնելու գումարի բռնագանձման և նմանակված օրինակների, դրանց պատրաստման համար օգտագործվող նյութերի ու սարքավորումների բռնագրավման և հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցման պահանջ, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ փաստացի խախտման վնասին համարժեք վնասների հատուցում, ներառյալ՝ բաց թողնված օգուտը: Վերոնշյալի, ինչպես նաև սույն գործով հաստատված և չլիճարկվող

	<p>փաստերի (Հեղինակային պայմանագրերի) ուժով, ակնհայտ է, որ Հայցվորի բաց թողնված օգուտը ավելին է, քան պահանջվող գումարի չափը, և քանի որ Հայցապահանջը ներկայացված է այդ չափով Վերաքննիչ դատարանը չի անդրադառնում բռնագանձման ենթակա գումարի մանրամասն հաշվարկին:</p> <p>Վերաքննիչ բողոքի երրորդ անձի իրավունքների մասով փաստարկներին Վերաքննիչ դատարանը չի անդրադառնում, քանի որ բողոքաբերը բողոք է ներկայացրել որպես պատասխանողի լիազորված անձ հետևաբար օժտված չէ նրա իրավունքների և շահերի պաշտպանությամբ Վերաքննիչ ատյանում հանդես գալու իրավասությամբ:</p> <p>Միաժամանակ Վերաքննիչ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Ղատարանը, հաշվի առնելով «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, բռնագրավել է միայն Գրքի իրատարկման հետ փոխկապակցված նյութերը և սարքավորումները, ուստի վերաքննիչ բողոքը այս հիմքով անհիմն է:</p> <p>Այսպիսով, Վերաքննիչ դատարանը հիմնավորված չի համարում վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները և գտնում է, որ դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ վճիռ: Օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով իրեն վերապահված լիազորությունից; Վերաքննիչ դատարանը սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ լրացուցիչ պատճառաբանում է Ղատարանի վճիռը:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 220-րդ և 221-րդ հոդվածներով: Վերաքննիչ դատարանը</p> <p><b>ՈՐՈՇԵՑ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Վերաքննիչ բողոքը մերժել: ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 03.06.2009 թվականի վճիռը թողնել անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:</li> <li>2. Ղատական ծասերի հարցը համարել լուծված:</li> <li>3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով:</li> </ol> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ Ն.ՀՈՎՍԵԹՅԱՆ Ն.ԲԱՐՍԵԴՅԱՆ</p> <p>ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով սույն որոշումը « » 2009 թվականի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ</p>
<b>Ղատական ակտի ամսաթիվը:</b>	11-09-2009
<b>Ամսաթիվ:</b>	11-09-2009
<b>Ամսաթիվ:</b>	11-09-2009
<b>Էջերի քանակ:</b>	2հ,1՝163թ,2՝59թ
<b>Գործին կից նյութերը:</b>	

Գործն ուղարկվել է:	16-10-2009
Ուր:	Վճռաբեկ
Գրության համարը:	
Այլ նշումներ:	
<b>Ամսաթիվ:</b>	19-10-2009
<b>Դատական Գործ N: ԱՐԴ/0023/02/09</b>	
<b>Ամսաթիվ:</b>	13-10-2009
<b>Բողոք բերող անձը</b>	
Անուն	Ամալյա
Ազգանուն	Դուկասյան
Հասցե	Երեվան, Կոմիտասի 8շ. 60բն.
Սեռ	Իգական
<b>Հավատարմագրված փաստաթան</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պետական տուրք:	15300
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
<b>Պատասխան բերող անձը</b>	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Բողոքարկվող դատական ակտը:	Ամալյա Դուկասյանի ընդդեմ «Ջահ Հրատարակչություն» ՓԲԸ-ի իրավահաջորդ «Ջահ ինդասթրիզ» ՓԲԸ-ի՝ հեղինակային խախտված իրավունքների վերականգնման և վնասի փոխհատուցման պահանջի մասին:
Գործի համարը:	ԱՐԴ/0023/02/09
Ուն կողմից է բերվել բողոքը:	Հայցվոր
Գործի ստացման ամսաթիվը:	19-10-2009
Էջերի քանակը:	163
Գործին կից փաստաթղթերը:	2-59թ.
Վճռաբեկ վարույթի համարը:	ԱՐԴ/0023/02/09
<b>Ամսաթիվ:</b>	19-10-2009
<b>Նախագահող դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	

<b>Դատավոր</b>	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Սուրեն Ռաֆիկի Անտոնյան
<b>Այլ նշումներ:</b>	
<b>Ամսաթիվ:</b>	28-10-2009
<b>Որոշման բովանդակությունը:</b>	Վճռաբեկ բողոքը վերադարձվել է:
<b>Ամսաթիվ:</b>	02-11-2009
<b>Գործի առաքման ամսաթիվը:</b>	17-11-2009
<b>Դատարան:</b>	Արմավիրի մարզ
<b>Այլ նշումներ:</b>	2 հատոր